ՏԱՐԻ Ե. ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 12 ՅՈՒՆԻՍ 1902 ԹԻՒ 424

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.

Պուլկարիոյ համար
տարեկան 12 Ֆր
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »

Ռուսիայի համար
Տարեկան 3 ռ.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. Երեքն անգամներու համար 20 %ով զեղչ կըլլայ.

Վառնայի համար հատը 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին.

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
« Charjoum»
Varna (Bulgarie)

Արտասահմանի համար հատը
)( 20 ՍԱՆԹԻՄ )(

Պուլկարիոյ համար հատը
⪯ 15 ՍԱՆԹԻՄ ⪯

Գրութիւնք չեն դարձուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ասլթարճեան ընտանիքը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ ամէն անոնց որոնք՝ անձամբ, հեռագրաւ ու նամակաւ արտայայտեցին իրենց ցաւակցութիւնը, նորոգ հանգուցեալ Պետրոս Ասլթարճեանի դառնաղէտ մահուան առթիւ.

Փ. Պոլիս 7/20 Յունիս 902

## ԲՈՂՈՔ

Հանուր տիեզերք տաճար մ'է կանգուն,
Զոր Դուն հիմնեցիր, ո՛վ հզօր Աստուած.
Արեգը տուիր, որ սփռէ կախուած՝
Երկնից խորանէն իր լոյսը անհուն.
Հանուր տիեզերք տաճար մ'է կանգուն.

Սեղան կանգնեցինք մեր վեհ լերանց մէջ,
Սեղա՛ն մը Բեզի-չքնաղ Արարատ,
Ուր ծունր դրած՝ լացի՛նք անարատ
Աղօթքը փառքիդ դարերով, անվերջ.
Սեղան կանգնեցինք մեր վեհ լերանց մէջ.

Բայց Դուն լսեցի՞ր աղօթք, հեծկլտանք,
Տուի՞ր շնորհ մը Աստուծոյդ վայել,
Գթած հօր մը պէս ելա՞ր փայփայել,
Սրբել արցունքը, զոր մենք կուլ կուտանք.
Միթէ լըսեցի՞ր աղօթք, հեծկլտանք.

Ո՛չ. Դուն կամեցար արիւնոտ սեղան,
Որ մենք պաշտէինք Խաչիդ տեղը զէնք.
Խունկի փոխարէն արիւն քեզ ծխենք,
Խոյի տեղ զոհէ՛ր հայրը իր տղան.
Այո՛ կամեցար արիւնոտ սեղան.

Թո՛ղ տուիր մորթեն մըշակները ժիր,
Կանաչ դաշտերուն տեղա՛յ հուր, կըրակ.
—Չէ՞ որ տիրական կամքիդ հակառակ՝
Տերեւ մըն անգամ տեղէն չը շարժիր—
Թո՛ղ տուիր մորթեն մըշակներդ ժիր.

Սեղանիդ վըրայ կընդրուկի փոխան՝
Թո՛ղ տուիր, այո՛, որ վերթ բուրվառի
Համայն Հայաստան ողջակէզ վառի.
Հայու չէն գիւղեր խանձըւին, մըխա՛ն՝
Սեղանիդ վըրայ կընդրուկի փոխան.

Դուն որ գիտեցիր մինչեւ հիմա լուռ,
Երկինքէն անհոգ մեր երկրի ցաւեր.
Առանց լսելու՜ մեր փուլ, կիսաւեր
Աշխարհի կոծը դա՛ռըն, մշտալուր.
Դուն որ գիտեցիր մինչեւ հիմա լուռ.

Կուզէի՞ր արդեօք որ քու աս տըւած
Աւերումներէդ վերջ դեռ աղօթեմ.
Եւ իմ հայրենեաց սե՛ւ բաղդին դէմ
Բողոք չը բառնամ՝ քեզ. ո՛վ Աստըւած.
Կուզէի՞ր արդեօք, ո՛վ մեծ Աստըւած.

ՎԷՏԱ

## ՎԱՌՆԱՅԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Ահա մի քանի օր է որ Վառնայում գտնւող մանածի գործարանի բանւորները գործադուլ են արել. Բանւորների թիւը հասնում է 650ի. դրանց մէջ կան մօտ հարիւր հոգի հայեր. Գործադուլի պատճառը գործարանի վարչութիւնն է, որովհետեւ նոր և աւելի անտանելի պայմաններ է առաջարկել գործաւորներին. Եւ այդ պատճառով էլ Վառնայի բնակիչների մի զգալի մասի ամբողջ համակրութիւնը բանւորների կողմն է.

Գործաւորները մինչեւ այսօր թուլութեան նշան չեն ցոյց տալիս, որովհետեւ ամէն կողմից նրանց պահանջների ոչ չափազանց և արդարացի գտնող համայնքներ օգնութեան են հասնում. Եւ իրենք բանւորներն էլ համոզւած են իրենց առած քայլի իրաւացիութեան մէջ.

Վառնայի հայ երիտասարդութիւնը չուզելով որ հայ բանւորները իրենց յոյսը միայն բուլկար ընկերների վրա դրած մնան, չուզելով անտարբեր մնալ բուլգար զգայուն երիտասարդութեան ճիգերի հանդէպ, ինքն էլ խնդրեց „Վէօլեօ“ խմբին մի ներկայացում տալ ի նպաստ գործադուլ անող բոլոր բանւորների.

„Վէօլեօ“ն համաձայնւեց և յոյս կայ որ Վառնայի հայութիւնն էլ այդ ձեւով պէտք է կարողանայ փաստել թէ ինքը միշտ համակիր է ամէն մի արդար և ազնիւ գործի.

⁂

Զարմանալին այն է որ Վառնայի գործաւորները գործադուլի որոշումը տուել են իրենք իրենց. արտաքին ոչ մի գրգռում չըկայ. տեղացի ընկերվարականները նոյն իսկ խորհուրդ են տուել գործադուլ չանել, քանի որ կազմակերպւած չեն դեռ, եւ չեն կարող դիմանալ. Բայց բանւորները աւելի գերադասել են անգործ մնալ, քան թէ բոլորովին ստորացնող պայմաններով աշխատել.

Բանւորների մէջ կան բազմաթիւ կիներ, աղջիկներ եւ մանուկներ. Եւ առայժմ համաձայնութիւնը այդ այլազան. այլասեռ այլացեղ բանւորների մէջ կատարեալ է.

Գործադուլ արած բանւորները ամուլ, կռիւ և ուրիշ անկարգութիւններ չեն անում. Իրենց վարք ու բարքով կատարեալ համակրանքի արժանի են.

ՎԱՐԴՕ

## „ԳՈՐԾ, ՈՉ ԽՕՍՔ“

Ամէն սիրտ ցաւ և զգայուն հայ անձկութեամբ կը սպասէ հայ յեղափոխութեան միակ օւկանին-Դրօշակին.

Հոն կը գտնենք արձագանքը տանջուող եղբայրներու սիրտ ծակող հեծկլտանքներուն. Հոն կը գտնենք նաեւ արձագանքը՝ յեղափոխականին խրոխտ քայլերուն, կազդուրող, սիրատուող ձայնին.

Նորէն հայ գիւղացիին արիւն-արցունքն է որ մեզ կը հասցնէ վերջին Դրօշակը.

Հոն զետեղուած են թղթակցութիւններ՝ տառապանքի աշխարքէն— Տիգրանակերտէն, Տարօնէն, Մերսինէն, Վանէն, գաղտուած բողոքի շեշտով գրուած տեղեկագիրներ առաջնորդարաններէն. Վայրագօրէն տուրքերու գանձում, սպաննութիւններ, թալան, վերջապէս անհատնո՛ւմ տանջանք. ահա՛ անոնց ամփոփումը.

Աս ամենուն քովը զետեղուած է հայ յեղափոխական գործիչին հեղինակաւոր ձայնը.

ԳՈՐԾ, ՈՉ ԽՕՍՔ.

Ան յեղ. գործիչին բողոքն է, ապտակն է արտասահմանցիներուս.

Տարօրինա՛կ դրութիւն. Յեղափոխականը արիւն-քրտինք պիտի թափէ երկրին մէջ. թշնամիին դիմաց, ազատութեան ճամբուն վրայ. բայց հոն ալ ազատ չէ կողմնակի հողերէ. Երկու ծանր աշխատութիւն մէկէն իր ուսերուն վրայ առեր է ան. թշնամիին դէմ կռուելու հոգը մէկ կողմէն, իր արտասահմանեան եղբայրները դէպի ԳՈՐԾԸ մղելու հոգը միւս կողմէն. Եռանդը, ժամանակը՝ զոր ամբողջութեամբ թշնամիին դէմ գոր-

․ըսուած բանը ձեր քովը երբէք չի՞ գտնուիր․ Երբ „Պատանի“ի հայիւ հայ առաջին թիւը չոր-ուած էր, երբ ամբողջ որբերս ուժգնաբար բողոքեցինք ձեզ այդպիսի պատուէլիական տափակ գաղափարներ տարածիչ ձեռնար-կի մասնակցելու դէմ ու յախուռ-նական և անզառնալի մերժում տուինք․ ո և է աջակցութիւն նուի-րելու, այնպէս չէ՞․ Բայց դուք չ՛ունկնդրեցիք մեզ ու միանգա-մայն ընդ մէջ ու խօսելով ընել այն ինչպէս յարմար էր ձեր չա-րանչի քմահաճոյքին, ու հա-կառակ բոլոր որբերու միահամուռ ընդդիմադրութեան յամառեցար ան վկանդ ամբողջ վեց ամիս շարու-նակել ձեր սորաքարշ գործը մեր անուան տակ մի քանի բա-ժանորդ աւելի գտնալու դիտա-ւորութիւնով, թէեւ դուք յու-սահատ սկիզբէն քաջ գիտէիք որ չը պիտի համակերպէինք ձեզ երբէք․ Ուստի ի՞նչպէս կը յու-սաք եղեր․ Փախուստի ճամբայ չկա՛յ․․․

Երրորդ կրկին շարաշար կը սխալիք ու գիտակցաբար կը շա-րունակել ստելու․ Յայտարա-րելով որ պատանիները շարելու ու „պագրելու կարեւոր գործերը ստանձնած են․

Եթէ այդպէս է, ցուցուցէք մեզ մէկ հատ մը որբերէն որ հրա-պարակաւ յայտնէ, թէ կամաւ կը շարէ „Պատանի“ն, ու այն ատեն պիտի հաւատանք թէ գոնէ ձեր ըսածներուն գոնէ այդ մասը ճիշդ է եղեր․ Բայց ընդհակառակը․ պատանիները հարկադրուած ու իբր անհրաժեշտ կատարուելու գործ նշանակուած է ընելու միա-հեծան հրամանաւդ, ինչպէս որ կընեն որբանոցին բոլոր մեծ ու պզտիկ գործերը․ Աս ալ ուրեմն սուտ է․ Վեց ամսուան ստու-թիւնը կուզէք մի քանի տողով գծել, բայց ՚ի զուր․ Պարզապէս խոստովանեցէք որ մոլորութը խաբեցիք, ուրիշ ճար չկայ․ Փա-խուստի ճամբայ չկա՛յ․․․

Երէֆ Որբեր

## ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պոլսոյ թերթերը կը հաղոր-դեն որ տրամադրութիւն կայ պատրիարքարանի մէջ տետրակ մը պահելու, ուր բոլոր պաշ-տօնեաները ամէն օր իրենց ներկայութիւնը պիտի հաստա-տեն իրենց ստորագրութեամբ․

— Մալաթիայէն եւս խնդրա-գրով մը կը խնդրեն որ Սանա-սարեան վարժարանը Խարբերդ փոխադրուի․

— Բաքուի երեցկին մը՝ Մարիամ Բուտաղեան մեռնելով, անոր զաւակը 5000 ռուբլի դրեր է Նութուղիկոսի տրամադրութեան տակ, 1500 ռուբլի արտասահմա-նի որբանոցներուն, 300 րբ. մարդասիրական ընկերութեան, 300 րբ. Դ. Լուս. եկեղեցւոյ, տուրեկան 200 րբ. աղքատներուն, տարեկան 200 րբ. Գէորգեան ճե-մարանի մէջ որբ մը պահելու հա-մար, 2000 ր. Թիֆլիսի թերթի մը նպաստ և կարգ մը ուրիշ նոր պատներ․

Այս ընտանիքին ուրիշ անդամ-ներ ալ մեծ բարեգործութիւններ ըրած են․

— Ռուսճուքի հայ երգեցիկ խումբը առաջին անգամ ըլլա-լով Պուլկարիոյ մէջ անցեալ կի-րակի Էքմալեանի ձայնագրած պատարագի քառաձայն երգե-ցողութիւնը կատարեր է․

— Վառնայի նոր կազմուած երգեցիկ խմբի վարչութիւնը կը յայտարարէ որ այլեւս նոր ան-դամներ չեն ընդունուիր․

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԹՈՒՐՔԻԱ

„Ինֆօրմասիօն“ թերթը Պոլսէն կիմանայ որ թուրք կառավարու-թիւնը հրամայած է այլեւս թուր-քերէն ոչ գրական ոչ գիտական գրքեր չը հրատարակուին, որով-հետեւ իբր թէ եղածները կը բաւեն եղեր․

Այդ պատճառով շատ մը թուրք տպարաններ գոցուած են և շատ ձուլիչներ ալ Պոլսէն հեռացած են․

— „Թան“ կը հաղորդէ որ Փիր-միլեանը Սուլթանի հրամանով Աթօս կղզին գացած է որ պիտի եպիսկոպոսներ երթան զոյն օծե-լու համար․

— Գերմանիան հետզհետէ իր ոտքը կամրացնէ Թուրքիոյ մէջ գերմանական թերթ մը կը հա-ղորդէ որ Սուլթանը իրատէով մը բոլոր գերմանական հանրօգուտ հաստատութիւններու օրինաւո-րութիւնը հաստատած է․

Նոյն թերթը Թուրքիոյ մէջ այդ տեսակ հաստատութիւններու ցանկ մը կը ներկայացնէ որոց թիւը 53ի կը հասնի․

— Ոստիկանութեան նախարա-րը Իսխան պէյին սպանումը լոկ պարզ վրէժխնդրութեան ար-դիւնք կը հռչակէ․ բայց սուտ է Իսխան պէյ սպաննուած է իբր Սուլթանի ամենավատ լրտեսնե-րէն մին․

### ՊՈՒԼԿԱՐԻԱ

Նախարարապետ Տանէվ ար-դէն Բարիզէն վերադարձած է․ կըսուի թէ փոխառութիւնը յաջո-ղած է,

— Պ. Տանէվ Բարիզի մէջ մէկու մը հետ ունեցած տեսակցութեան միջոցին յայտարարած է որ Պուլ-կարիան թագաւորութիւն հրա-տարակելու լուրը սուտ է․ Պուլ-կարիա նուի ջան այդ աւելի կա-րեւոր խնդիրներ ունի կարգա-դրելիք, երկիրը բարեկարգելու համար․

— Վառնայի գործադուլը ե-րեսփոխանական ժողովին մէջ հարցապնդումի նիւթ եղած է․ կըսուի թէ նախարարութիւնը քն-նիչ մը պիտի ղրկէ․

### ՑՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնքի մէջ քանի մը պուլ-կարներ ձերբակալուած են․

Կը կարծեն որ ձերբակալուած-ները Սօֆիայի Մակ. Ռ. Կոմիտէի գործակատարները են, որոնք զա-նազան ժամանակներու մէջ հր-բայցան և պատերազմական մր-թերքներ անցուցանեն Մակեդո-նիա․

### ԱՆԳԼԻԱ

Թագուհրը հիւանդութեան պատճառով չէ կրցեր ներկայ գտնուիլ թագադրութենէն առաջ եղած հանդէսներուն․

Կը վախցուի որ թագուհրը չը պիտի կրնայ դիմանալ թագա-դրութեան շատ յոգնացուցիչ հանդէսին․

Իրէ մոլովուրդը և թէ կառա-վարութիւնը այդ պատճառով մ ծ մտահոգութեան մէջ են․

### ԶՈՒԻՑԵՐԻԱ

Մամուլը մեծ յուզումի մէջ է թուրք լրտես հիւպատոսներուն Զուիցերիոյ մէջ գոյութիւն ունե-նալուն համար․ Կառավարու-թենէ կը պահանջէ որ անոնք երկրէն արտաքսուին․ Բարկու-թիւնը աւելի ծընէվ գտնուած թուրք հիւպատոսին դէմ է․

### ԹՐԱՆՍՎԱԱԼ

Պօէրներու անձնատուութիւնը կը շարունակուի խաղաղութեամբ․ Տուէթ Տէլարէյև Պօթա զօրավար-ները իրենց ճառերով, յորդորնե-րով շատ կը դիւրացնեն անձնա-տուութեան գործը․ Մօտ քսան հազար հրացան արդէն յանձ-նուած է անգլիական իշխանու-թիւններուն․

### ՖՐԱՆՍԱ

1900 փետրվար 2ին ասոս ըն-կերվարականներու ներկայացու-ցիչները ժողովի մը մէջ որոշե-ցին Բարիզի մէջ արձան կանգնել հանգուցեալ ռուս յեղափոխական եւ ընկերաբան Լաւրովի յիշատա-կին համար․

Հիմա „Օրօր“ թերթը կը հա-ղորդէ որ արձանի բացումը տե-ղի պիտի ունենայ յուլիս 22ին Մօնբարնա․

Լոյս տեսաւ
Ֆրանսացի նշանաւոր վիպասաններէն ՌԸՆԷ ՏԸ ՓՕՆ-Ժէի հեղինակութիւնը եղող
ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵԿՕՐԵԱԼԸ
անուն խիստ հետաքրքրաշարժ եւ զարմանալի ցնցիչ վէպին
Երրորդ եւ Չորրորդ պրակները
[illegible] 8 ական երեսնոց [illegible] 5 [illegible]
Առջի երես 24-25 [illegible]
Վառնայի համար բաժանորդագին 1 Fr. : Դուրսի բաժանորդներու եւ առաքումներու համար 1.20 :
[illegible]
ԱՐԳԻՆԻԿԵԱՆ ՏՈՒՐՈՆ, ՕՏՆԻԿ ԲԱՐՕՆՂԵԱՆԻ, ՎԱՐՆԱ :
Դրամի փոխարէն նամակադրոշմ ալ կընդունուի :

ԹԱՏՐՈՆ „ՊՕՐԻՍ“
Հաճի Բաճաֆօ
Ամառնային շրջան
«ՎԷՍԷԼՕ»
Հայ դերասանական խումբն
Վաղը Կիրակի գիշեր ժամը 9ին
Արտաֆոյ կարգի շքեղ երեկոյթ
առաջին անգամ ըլլալով
ԴԱՂՏՆԻՔ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ
կամ
ՀՆԴԿԱԿԱՆ ՄԵԾ ՑԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ
ԸՆԴԴԷՄ ԱՆԳԼԻՈՅ
պատմական թատերախաղ 5 արար
չորս կենդանի պատկերով
ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐՔ
Պ.Գ. Յակոբեանի եւ Օր. Րօզալիի կողմէ
ՊԱԼԷԴ
Օրիորդ Բարսամյանի կողմանէ
խիստ ծիծաղաշարժ զաւեշտ մը
Մօտ օրէն պիտի ներկայացուի Ֆրանսվալի ներկայ պատերազմը թատերախաղ պատմական զանա-զան տեսարաններով․
Փորձի տրուած է Կոմս Մօնթէ-Քրիսթօ․ երեք երեկոյթի բաժ-նուած է․

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печ. Взаимность" — Варна